Հավելված 1
Հաստատված է Հայաստանի Հանրապետության
էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի
2002 թվականի դեկտեմբերի 24-ի N 92Ն
որոշմամբ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ

« » 200 թ. ք.
_____

Էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության, հաղորդման, բաշխման, էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկային ծառայությունների մատուցման լիցենզիաներ ունեցող անձինք, այսուհետև՝ Պատվիրատուներ, ղեկավարվելով իրենց կանոնադրությամբ, գործունեության լիցենզիաներով, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով, մի կողմից, և էլեկտրաէներգետիկական շուկային հաշվարկային կենտրոնի ծառայության մատուցման լիցենզիա ունեցող անձը, այսուհետև՝ Կատարող, ղեկավարվելով իր կանոնադրությամբ, գործունեության լիցենզիայով, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով, մյուս կողմից, համատեղ կոչվելով Կողմեր (Կողմերի ցանկը և տվյալները բերված են N 1 հավելվածում), կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրում օգտագործված հասկացությունները

Արտադրող՝ էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության գործունեության լիցենզիա ունեցող իրավաբանական անձ.

Արտահանող՝ Հայաստանի Հանրապետությունից էլեկտրական էներգիայի (հզորության) արտահանման գործունեության լիցենզիա ունեցող իրավաբանական անձ.

Բաշխող՝ էլեկտրական էներգիայի (հզորության) բաշխման գործունեության լիցենզիա ունեցող իրավաբանական անձ.

Հաղորդող՝ էլեկտրական էներգիայի հաղորդման ցանցով էլեկտրական էներգիայի (հզորության) հաղորդման գործունեության լիցենզիա ունեցող իրավաբանական անձ.

Հանձնաժողով՝ Հայաստանի Հանրապետության էներգետիկայի կարգավորող հանձնաժողով.

Հաշվարկային ամիս՝ ժամանակահատված, որի գործողությունը սկսվում է օրացուցային ամսվա առաջին օրվա ժամը ___-ին և ավարտվում է հաջորդ օրացուցային ամսվա առաջին օրվա ժամը ___ -ին.

Մեծածախ գնորդ-վաճառող՝ էլեկտրաէներգետիկայի ոլորտում լիցենզավորված գործունեություն իրականացնող իրավաբանական անձ, որին գործունեության լիցենզիայով տրված է էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայում Արտադրողներից (Ներկրողներից) էլեկտրաէներգիայի մեծածախ գնման և Բաշխողին մեծածախ վաճառքի գործառույթներ իրականացնելու բացառիկ իրավունք.

Ներկրող՝ Հայաստանի Հանրապետություն էլեկտրական էներգիայի (հզորության) ներկրման գործունեության լիցենզիա ունեցող իրավաբանական անձ.

Սակագին՝ էլեկտրական էներգիայի և (կամ) հզորության միավորի վաճառքի, էլեկտրաէներգետիկայի բնագավառում լիցենզավորված գործունեությամբ մատուցվող ծառայությունների համար (բացառությամբ կառուցման կամ վերականգնման և արտահանման գործունեությունների) «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան սահմանված գինը.

Ֆորս մաժոր՝ արտակարգ և անկանխելի դեպքեր և հանգամանքներ, որոնք ստեղծվել են Լիցենզավորված անձի կամքից անկախ, ներառյալ (սակայն չսահմանափակվելով դրանցով) բնական աղետները, բնության ուժերի արտասովոր ուժեղ դրսևորումները, ինչպես, օրինակ, ջրհեղեղները, երկրաշարժերը, փոթորիկները, պտտահողմերը, նաև սաբոտաժային գործողություններ, ահաբեկչություններ, պատերազմներ, ապստամբություններ, հասարակական անկարգություններ, գործադուլներ, որոնք խոչընդոտում են Լիցենզավորված անձի գործունեությանը կամ հանգեցնում նրա ստանձնած ցանկացած պարտավորության կատարման ձգձգման կամ դադարեցման՝ հակառակ նրա կողմից գործադրված ջանքերի՝ խուսափելու, թուլացնելու կամ վերացնելու այդ ուժերի ազդեցությունը:

2. Պայմանագրի առարկան

2.1 Կատարողը հաշվարկային կենտրոնի ծառայություններ է մատուցում Պատվիրատուներին, իսկ Պատվիրատուները վճարում են այդ ծառայությունների համար:

3. Կողմերի պարտականությունները

3.1 Կողմերը պարտավոր են ղեկավարվել «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, գործունեության լիցենզիայով, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, Հանձնաժողովի ընդունած և այլ իրավական ակտերով:

3.2 Կատարողը պարտավոր է՝

ա) հաշվառել Պատվիրատուների կողմից արտադրված (Արտադրողի կողմից առաքված), հաղորդված, ներկրված, արտահանված, Բաշխողի կողմից գնված էլեկտրաէներգիան (հզորությունը),

բ) կազմել Պատվիրատուների վճարման ենթակա էլեկտրաէներգիայի և էլեկտրական հզորության (էլեկտրաէներգիայի առուվաճառքի) ակտերը, հաշիվ-ապրանքագրերը և ներկայացնել շահագրգիռ կողմերի ստորագրմանը,

գ) շահագործել և պահպանել իր սեփականություն հանդիսացող կամ իր տնօրինության տակ գտնվող էլեկտրաէներգետիկական համակարգի էլեկտրաէներգիայի (հզորության) առևտրային հաշվառման ավտոմատացված համակարգը,

դ) էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայում հաշվարկել և հաշվառել էլեկտրական էներգիայի տեխնոլոգիական անխուսափելի և փաստացի կորուստների մեծությունները և ներկայացնել շահագրգիռ կողմերին,

ե) համաձայնեցնել և կոորդինացնել էլեկտրական էներգիայի (հզորության) հաշվառման առևտրային և հսկիչ սարքերի արտապլանային և պլանային ստուգումները,

զ) հաշվառել տարածաշրջանային էլեկտրաէներգետիկական համակարգերի հետ միջհամակարգային հոսանահաղորդումները և ներկայացնել շահագրգիռ կողմերին,

է) հավաքագրել և պահպանել հաշվառման տվյալները, ձևավորել հաշվառման տվյալների տեղեկատվական բազա,

ը) Պատվիրատուների հարցման դեպքում նրանց տրամադրել անհրաժեշտ տեղեկատվություն և նյութեր, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ տեղեկատվությունը և նյութերը համարվում են գաղտնի:

3.3 Պատվիրատուները պարտավոր են՝

ա) Կատարողի պահանջով տեղադրել հաշվառումն ապահովող համակարգեր,

բ) Կատարողի պահանջով տրամադրել էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայում էլեկտրաէներգիայի հաշվառման համար անհրաժեշտ տեղեկատվություն,

գ) իրենց տնօրինության տակ գտնվող հաշվառման կետերում տեղադրված հաշվառքի սարքերի պլանային և արտապլանային ստուգումների, դրանց փոխարինման, անսարքություն հայտնաբերելու դեպքերում տեղեկացնել Կատարողին՝ կատարելով համապատասխան ձևակերպումներ,

դ) չխոչընդոտել Կատարողին (նրա լիազոր ներկայացուցիչներին) իր պայմանագրային պարտականությունների կատարման նպատակով մուտք գործել Արտադրողի, Հաղորդողի և Բաշխողի տնօրինության տակ գտնվող տարածքները (էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայում էլեկտրաէներգիայի հաշվառման կետերը):

4. Էլեկտրաէներգիայի (հզորության) հաշվառում և հաշվարկում

4.1 Սույն պայմանագրով չկարգավորված էլեկտրաէներգիայի (հզորության) հաշվառման և հաշվարկման գործառույթները կանոնակարգվում են էլեկտրաէներգիայի (հզորության) հաշվառման կարգով:

~~5.2 ¾É»Ïïñ³¿Ý»ñ·Ç³ÛÇ ³Ùë³Ï³Ý Í³ËëÇ Ñ³ßí³ñÏÙ³Ý Ñ³Ù³ñ ³é¨ïñ³ÛÇÝ Ñ³ßí³éùÇ ë³ñù»ñÇ óáõóÙáõÝùÝ»ñÁ Ñ³ßí³ñÏ³ÛÇÝ ³Ùëí³ í»ñçÇÝ ûñí³ Å³ÙÁ 11⁰⁰-ÇÝ Ñ³Ù³ï»Õ ·ñ³ÝóáõÙ »Ý ÎáÕÙ»ñÇ ÉÇ³½áñ Ý»ñÏ³Û³óáõóÇãÝ»ñÁ, áñÇ Ù³ëÇÝ Ï³½ÙíáõÙ ¿ »ñÏÏáÕÙ ³Ïï (Ñ³í»Éí³Í N 5):~~

~~ÎáÕÙ»ñÇó Ù»ÏÇ å³Ñ³Ýçáí Ï³ñáÕ ¿ Ï³ï³ñí»É Ñ³ßí³éùÇ ë³ñù»ñÇ óáõóÙáõÝùÝ»ñÇ ÙÇç³ÝÏÛ³É ·ñ³ÝóáõÙ:~~

~~ÎáÕÙ»ñÇó Ù»ÏÇ ãÝ»ñÏ³Û³Ý³Éáõ ¹»åùáõÙ Ñ³ßí³éùÇ ë³ñù»ñÇ óáõóÙáõÝùÝ»ñÇ ·ñ³ÝóáõÙÁ Ï³ï³ñíáõÙ ¿ ÙÇ³ÏáÕÙ³ÝÇ:~~

~~5.3 ²Ùëí³ ÁÝÃ³óùáõÙ ¶Ýáñ¹ÇÝ ³é³ùí³Í ¿É»Ïïñ³¿Ý»ñ·Ç³ÛÇ Ñ³Ù³ñ ì³×³éáÕÝ áõ ¶Ýáñ¹Á Ñ³Ù³ï»Õ Ï³½ÙáõÙ »Ý ¿É»Ïïñ³¿Ý»ñ·Ç³ÛÇ ³éáõí³×³éùÇ ³Ïï (Ñ³í»Éí³Í N5), áñÁ ÎáÕÙ»ñÇ Ñ³ëï³ïáõÙÇó Ñ»ïá Ñ³Ù³ñíáõÙ ¿ ÑÇÙù í×³ñÙ³Ý Ñ³Ù³ñ:~~

~~5.4 ÎáÕÙ»ñÇó Ù»ÏÇ å³Ñ³Ýçáí, ëáõÛÝ å³ÛÙ³Ý³·ñÇ 9.1 Ï»ïáí ë³ÑÙ³Ýí³Í Ï³ñ·áí, Ï³ï³ñíáõÙ ¿ ³é¨ïñ³ÛÇÝ Ñ³ßí³éùÇ ë³ñù»ñÇ ³ßË³ï³ÝùÇ ×ßïáõÃÛ³Ý ëïáõ·áõÙ« ³ÝÑñ³Å»ßïáõÃÛ³Ý ¹»åùáõÙª µÝ³Ï³ÝáÝ ³ßË³ï³ÝùÇ í»ñ³Ï³Ý·ÝáõÙ ¨ (Ï³Ù) ÷áË³ñÇÝáõÙ:~~

~~¶Ýáñ¹Á, »ÉÝ»Éáí ³ÝÑñ³Å»ßïáõÃÛáõÝÇó, Ï³ñáÕ ¿ Çñ ÙÇçáóÝ»ñáí Çñ³Ï³Ý³óÝ»É ³é¨ïñ³ÛÇÝ Ñ³ßí³éùÇ ë³ñù»ñÇ í»ñ³ÑëÏÙ³Ý ³ÛÉ Ë»É³ÙÇï ÙÇçáóÝ»ñ ¨ Ù»Ãá¹Ý»ñ:~~

~~5.5 Üí³½³·áõÛÝ µ»éÝí³ÍùÇ é»ÅÇÙáõÙ, »ñµ ï»ËÝÇÏ³å»ë ³ÝÑÝ³ñ ¿ Ñ³ßí³éùÇ ë³ñù»ñÇ ³ßË³ï³ÝùÁ, ¶Ýáñ¹Ç ÏáÕÙÇó û·ï³·áñÍíáÕ ¿É»Ïïñ³¿Ý»ñ·Ç³ÛÇ Ñ³ßí³ñÏÇ ïíÛ³ÉÝ»ñÇ ÷áËÑ³Ù³Ó³ÛÝ»óí³Í Ù»ÍáõÃÛáõÝÝ»ñÁ ë³ÑÙ³ÝáõÙ »Ý ÎáÕÙ»ñÁ ¨ Ïóáõù ëáõÛÝ å³ÛÙ³Ý³·ñÇÝ:~~

5. **Կատարողին իր մատուցած ծառայությունների համար վճարման կարգը**

~~6.1 ì³×³éáÕÇ ÏáÕÙÇó ³é³ùí³Í ¿É»Ïïñ³¿Ý»ñ·Ç³ÛÇ ³ñÅ»ùÁ áñáßíáõÙ ¿ ¿É»Ïïñ³¿Ý»ñ·Ç³ÛÇ ë³Ï³·ÝÇ (Ñ³í»Éí³Í N1) ¨ ÷³ëï³óÇ ³é³ùí³Í ¿ÉÏïñ³¿Ý»ñ·Ç³ÛÇ (Ñ³í»Éí³Í N5) ÑÇÙ³Ý íñ³: ²Ù»Ý³ÙëÛ³ í×³ñÙ³Ý »ÝÃ³Ï³ ·áõÙ³ñÁ Ñ³ßí³ñÏíáõÙ ¨ ³Ùñ³·ñíáõÙ ¿ ÷áË³¹³ñÓ ³Ïïáí:~~

5.1 Էլեկտրաէներգետիկական շուկային հաշվարկային կենտրոնի ծառայությունների մատուցման Սակագինը սահմանում է Հանձնաժողովը:

5.2 Մինչև Հաշվարկային ամսվան հաջորդող ամսվա 15-ը Կատարողը իր մատուցած ծառայությունների համար կազմում է հաշիվ-ապրանքագրեր և ներկայացնում Մեծածախ գնորդ-վաճառողին:

5.3 Կատարողին իր մատուցած ծառայությունների համար վճարում է Մեծածախ գնորդ-վաճառողը մինչև Հաշվարկային ամսվան հաջորդող ամսվա 25-ը՝ Բաշխողի հատուկ հաշվից:

5.4 Կատարողին իր մատուցած ծառայությունների համար վճարումներն իրականացվում են միայն դրամական միջոցներով:

~~6.2 ºÉÝ»Éáí N5 Ñ³í»Éí³Í-Ç ³ÏïÇó, ì³×³éáÕÁ Ï³½ÙáõÙ ¨ ÙÇÝã¨ Ñ³çáñ¹ ³Ùëí³ 5-Á ¶Ýáñ¹ÇÝ ¿ Ý»ñÏ³Û³óÝáõÙ í×³ñÙ³Ý ÷³ëï³ÃáõÕÃ, áñï»Õ ÝßíáõÙ ¿ ïíÛ³É ³Ùëí³ ÁÝÃ³óùáõÙ í×³ñÙ³Ý »ÝÃ³Ï³ ÁÝ¹Ñ³ÝáõÑ ·áõÙ³ñÁ:~~

~~6.3 ¶Ýáñ¹Á å³ñï³íáñ ¿ í×³ñÙ³Ý ÷³ëï³ÃáõÕÃÝ ëï³Ý³Éáõ ûñí³ÝÇó Ñ³ßí³Í 20 (ùë³Ý) ûñí³ ÁÝÃ³óùáõÙ í×³ñÙ³Ý »ÝÃ³Ï³ ·áõÙ³ñÁ ÷áË³Ýó»É ì³×³éáÕÇ µ³ÝÏ³ÛÇÝ Ñ³ßí»Ñ³Ù³ñÇÝ: ê³ÑÙ³Ýí³Í Å³ÙÏ»ïáõÙ ãí×³ñ»Éáõ ¹»åùáõÙ ì³×³éáÕÁ Ï³ñáÕ ¿ ÑÇß»óÙ³Ý Ï³ñ·áí (·ñáõÃÛáõÝ, Ñ»é³Ëáë³·Çñ, ý³ùë, ¿É»ÏïñáÝ³ÛÇÝ ÷áëï ¨ ³ÛÉÝ) ¶Ýáñ¹ÇÝ ½·áõß³óÝ»É í×³ñÙ³Ý áõß³óÙ³Ý Ù³ëÇÝ: ÜßÍ³Í Å³ÙÏ»ïáõÙ ³å³éùÁ ãÙ³ñ»Éáõ ¹»åùáõÙ ì³×³éáÕÁ ·Ýáñ¹ÇÝ ïáõÛÅ ¿ í×³ñáõÙ Ûáõñ³ù³ÝãÛáõñ áõß³óí³Í ûñí³ Ñ³Ù³ñ ãí×³ñí³Í ·áõÙ³ñÇ --------%-Ç ã³÷áí (µ³Ûó 0.1%-Çó áã ³í»ÉÇ):~~

~~Ð³ßí³ñÏí³Í ïáõÛÅÁ ãÇ Ï³ñáÕ ·»ñ³½³Ýó»É Ñ³ßí³ñÏ³ÛÇÝ ³ÙëáõÙ í×³ñÙ³Ý »ÝÃ³Ï³ ÁÝ¹Ñ³Ýáõñ ·áõÙ³ñÇ 10%-Á:~~

~~6.4 ÐÐ ûñ»Ýë¹ñáõÃÛ³Ùµ ë³ÑÙ³Ýí³Í Ï³ñ·áí ¨ ÎáÕÙ»ñÇ Ñ³Ù³Ó³ÛÝáõÃÛ³Ùµª Ý³Ë³ï»ëí³Í ïáõÛÅ»ñÁ Ï³ñáÕ »Ý ãÏÇñ³éí»É Ï³Ù ½Ççí»É:~~

6. **Կողմերի պատասխանատվությունը**

6.1 Սույն պայմանագրի պայմանները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Կողմերը պատասխանատվություն են կրում սույն պայմանագրով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7. **Ֆորս մաժորային իրավիճակներ**

7.1 Սույն պայմանագրի պայմանները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դրանք Ֆորս մաժորի հետևանք են:

7.2 Կողմերը պարտավոր են վերոհիշյալ վիճակների մասին անհապաղ տեղեկացնել միմյանց՝ նշելով դրանց հետևանքների վերացման հնարավոր ժամկետները:

8. **Տարաձայնությունների լուծումը**

8.1 Պայմանագրի առնչությամբ Կողմերի միջև ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ անհրաժեշտության դեպքում՝ Հանձնաժողովի

միջնորդությամբ՝ նրա կողմից սահմանված կարգով: Սույն պայմանը չի սահմանափակում Կողմերի իրավունքը՝ վեճերը լուծելու դատական կարգով:

8.2 Եթե տարաձայնության առարկան Կատարողի կողմից ներկայացված հաշիվ-ապրանքագրերն են, ապա ցանկացած դեպքում տարաձայնություն ունեցող Պատվիրատուները (Պատվիրատուներից որևէ մեկը) պարտավոր են (պարտավոր է) ստորագրել հաշիվ-ապրանքագրերը, իսկ Մեծածախ-գնորդ վաճառողը (Արտահանողը՝ Կատարողի կողմից իրեն մատուցած ծառայությունների դեպքում) պարտավոր է կատարել վճարումը, որից հետո միայն լուծել տարաձայնությունը: Տարաձայնություն ունեցող Պատվիրատուները (Պատվիրատուներից որևէ մեկը) իրավունք ունեն (ունի) ստորագրած հաշիվ-ապրանքագրերին կցել հատուկ կարծիք:

9. **Պայմանագրին միանալու կարգը**

9.1 Ցանկացած նոր Պատվիրատու, բացառությամբ Արտահանող (Ներկրող) հանդիսացող նոր Պատվիրատուի, համապատասխան գործունեության լիցենզիան ուժի մեջ մտնելուց հետո 1 օրյա ժամկետում դիմում է Կատարողին՝ կցելով իրեն գործունեության լիցենզիա տրամադրելու մասին Հանձնաժողովի որոշման պատճենը:

9.2 Արտահանող (Ներկրող) հանդիսացող նոր Պատվիրատուն էլեկտրական էներգիայի արտահանման (ներկրման) պայմանագրով նախատեսված արտահանում (ներկրում) իրականացնելու օրվանից առնվազն 1 օր առաջ դիմում է Կատարողին՝ կցելով իրեն գործունեության լիցենզիա տրամադրելու մասին Հանձնաժողովի որոշման պատճենը և էլեկտրական էներգիայի արտահանման (ներկրման) պայմանագիրը:

9.3 Կատարողը նոր Պատվիրատուի սույն պայմանագրին միանալու մտադրության մասին գրավոր տեղեկացնում է բոլոր Պատվիրատուներին: Սույն պայմանագրին նոր Պատվիրատուի միանալու համար Կատարողի և Պատվիրատուների համաձայնությունը չի պահանջվում:

9.4 Ցանկացած նոր Պատվիրատու, բացառությամբ Արտահանող (Ներկրող) հանդիսացող նոր Պատվիրատուի, համարվում է միացած սույն պայմանագրին՝ կնքված պայմանագիրը Հանձնաժողովի կողմից գրանցման պահից:

9.5 Արտահանող (Ներկրող) հանդիսացող նոր Պատվիրատուն սույն պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող N2 հավելվածի համաձայն կնքված համաձայնագիրը Հանձնաժողովի կողմից գրանցման պահից համարվում է միացած սույն պայմանագրին:

9.6 Արտահանող (Ներկրող) հանդիսացող նոր Պատվիրատուի սույն պայմանագրին միանալու հետ կապված առանձնահատկությունները սահմանվում են N2 հավելվածում:

10. **Այլ պայմաններ**

(կազմում են Կողմերը)

_____

_____

_____

_____

11. **Պայմանագրի գործողության ժամկետը և փոփոխման կարգը**

11.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Հանձնաժողովի կողմից գրանցման պահից և գործում է մինչև 200__թ._____:

11.2 Պայմանագիրը կարող է փոփոխվել փոխադարձ համաձայնությամբ: Փոփոխված պայմանագիրը ուժի մեջ է մտնում Հանձնաժողովի կողմից գրանցման պահից:

11.3 Հանձնաժողովի կողմից հաշվարկային կենտրոնի ծառայությունների մատուցման պայմանագրի նոր օրինակելի ձև հաստատելու կամ գործող օրինակելի ձևում փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարելու դեպքում Կողմերը պարտավոր են Հանձնաժողովի սահմանած ժամկետում կնքել նոր պայմանագիր կամ համապատասխան փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարել գործող պայմանագրերում՝ ներկայացնելով այն Հանձնաժողովի գրանցմանը: Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Հանձնաժողովում գրանցվելու պահից:

11.4 Պայմանագիրը կազմված է _____ օրինակից՝ մեկական Կատարողի, յուրաքանչյուր Պատվիրատուի և Հանձնաժողովի համար:

12. **Պայմանագրի անբաժանելի մաս կազմող հավելվածների ցանկը**

Հավելված N1՝ Կողմերի ցանկը և տվյալները

Հավելված N2՝ Համաձայնագիր Արտահանող (Ներկրող) հանդիսացող նոր Պատվիրատուի հաշվարկային կենտրոնի ծառայությունների մատուցման պայմանագրին միանալու հետ կապված առանձնահատկությունների մասին